ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Հարցադրումների մեթոդը որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց»

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Սուսաննա Մուրադյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սիսիանի հ.1 հիմն. դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. Խաչատրյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն ----------5

2.Գրական ակնարկ ----------8

3.Ընդանուր բնութագրի ----------14

4.Ընթացք, վերլուծություն ----------15

5.Եզրակացություն ----------18

6. Գրականության ցանկ ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տվեք երեխային հետաքրքրասիրություն:

Գիտելիքը նա կգտնի ինքը:

Անատոլի Գին

Ժամանակակից մանկավարժությունը ենթադրում է ուսումնառության բարդ գործընթաց, իսկ այդ գործընթացը մոտիվացնող և ստեղծարար դարձնողը ուսուցիչն է:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ է ուսումնառության գործընթացը ենթարկել փոփոխությունների՝ կախված երեխաների պահանջներից, ժամանակին համաքայլ և տարբեր ռազմավարություններ ու մեթոդներ կիրառելով, օգտագործել ՏՀՏ միջոցներ և ձևեր:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կիրառվող մեթոդներով: Ինչպես ասում էր հայտնի մանկավարժ Մ.Ն.Սկատկինը, մեթոդը ճանապարհ է, որով ուսուցիչը աշակերտին տանում է անգիտությունից դեպի գիտելիք,անկարողությունից դեպի կարողություն:

Արդյունքում սովորողը ձեռք է բերում որոշակի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ինչպես նաև ձևավորվում են նրա աշխարհայացքը և ճանաչողությունը:

Ես վերցրել եմ և կիրառել հարցադրումների մեթոդը, քանի որ վստահ եմ այս մեթոդի արդյունավետության վրա, սովորողների առաջընթացը դասից դաս տեսանելի է: Այսօր ուսուցման ոլորտում կան բազմաթիվ խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր պատճառները: Դրանք են.

ա)Աշակերտների անտարբերությունը ուսման նկատմամբ

բ)Ծնողները չեն աջակցում,աշակերտները չեն ցանկանում սովորել:

գ) Դասարաններում սովորում են տարբեր կարողություն և առաջադիմություն ունեցող աշակերտներ:

դ) Սովորողների պասիվ մասնակցությունը դասապրոցեսին:

զ) Սովորողների մոտ հանդուրժողականության և մեկը մյուսին օգնելու կարողությունների բացակայությունը:

Իմ նպատակն է հարցադրումների մեթոդի միջոցով.

ա) ապահովել սովորողների ներգրավածությունը դասին,

՝ բ) դասավանդման ընթացքը դարձնել ավելի ակտիվ, մասնակցային

գ) մտքերի ազատ արտահայտում

դ) ինքնուրույն հարցադրումներ կազմելուն

ե) ունեցած գիտելիքների ամրապնդում

զ) նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերում

է) հանդուրժողականության և փոխօգնության ձևավորում:

Ուսումնասիրել եմ գիտամանկավարժական գրականություն և հետազոտվող թեմային վերաբերող հետազոտական աշխատանք, կատարել եմ վերլուծություն:

Հետազոտական աշխատանքի հիմնական **նպատակն** է բացահայտել հարցադրման մեթոդի կիրառման նշանակությունը սովորողների մտածողական ունակությունների զարգացման գործում:Այն սովորողների առաջ դնում է ինչ՞ու,ինչպե՞ս հարցերը և նպաստում ոչ միայն ինքնուրույն մտածողության զարգացմանը, այլև ուսուցման ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, ինքնուրույն հարցադրումներ կազմելուն, ըստ նպատակի գլխավորը,առաջնայինը զանազանելուն:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսուցման ժամանակակից մեթոդները կարող են մեծացնել աշակերտի հետաքրքրությունները, զարգացնել նրանց մտածողությունը, ստեղծարարությունը, գիտելիքների ձեռքբերումը դարձնել ակտիվ ճանաչողական գրածընթաց, քանզի աշակերտը այդ ընթացքում դառնում է ակտիվ , իսկ ուսուցիչը փորձում է լինել ուղղորդող, վերահսկող:

Ուսուցման գործընթացը խթանող արդյունավետ մեթոդներից է հարցադրումների մեթոդը, որը հնարավորություն է տալիս ապահովել սովորողների ներգրավածությունը դասին, ակտիվ մասնակցությունը, մտքերի ազատ արտահայտում, վերլուծում, նոր նյութի ընկալում:

Սովորողը կարող է ձևավորել և զարգացնել խոսքը, հիշողությունը, մտածողությունը, ստեղծագործելու ունակությունը, մեծանում է ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ, որից էլ զարգանում է ինքնուրույն աշխատելու հմտությունները: Հարցադրումների մեթոդը մոտիվացնում է աշակերտներին, ուստի կարելի է այն կիրառել դասի ցանկացած փուլում:Այն հնարավորություն է տալիս ապահովել մեծաթիվ սովորողների ներգրավածությունը դասին,ապահովում է ակտիվ մասնակցությունը, մտքերի ազատ արտահայտում, վերլուծում, խնդիրների լուծում, նոր նյութի ընկալում և վերլուծում: Այս գործընթացում սովորողը կարող է ձևավորել և զարգացնել խոսքը, հիշողությունը, մտածողությունը, ստեղծագործելու ունակությունը, մեծանում է ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ, որից էլ զարգանում է ինքնուրույն աշխատելու հմտությունները :

Հարցերը, որոնք տրվում են դասի ընթացքում, պետք է ունենան ուղղորդող և զարգացնող նպատակ: Հարցերը պետք է բաշխվեն այնպես,որ ներգրավվեն թե՛ կամավորները, թե՛ դասին պասիվ նստած աշակերտները: Հարցրեը պիտի լինեն պարզ և բարդ, որպեսզի ներգրավվեն և՛ թույլ և՛ ուժեղ կարողություններով աշակերտները: Հարցերը պետք է կազմվեն պարզից բարդ, մատչելիից անմատչելին, իմացականից դեպի տրամաբանականը կառուցվածքով: Ուսուցիչը պիտի ունենա համբերատարություն, հարցը տալ և սպասել պատասխանին: Յուրաքանչյուր հարցից

հետո ենթադրվում է դադար, որպեսզի պատասխանել ցանկացողների թիվը շատանա և աշակերտը ժամանակ ունենա մտածելու: Հարցադրումները պետք է ապահովեն արագ հետադարձ կապ: Եթե պատասխանները ճիշտ են, ապա պետք է ուղեկցվեն գովեստի խոսքերով, որի ընթացքում դեմքի դրական (ժպտալ, գլխի դրական շարժումներ. Տրված հարցերին տված սխալ պատասխանները միանգամից չպետք է մերժվի, այլ առանց աշակերտի անձը վիրավորելու հարցերի բնույթը փոխելով պետք է օգնի և ուղղորդի աշակերտին ճիշտ պատասխանը գտնելուն: Հարցրեը տալուց պետք է ապահովել լսելիությունը դասարում: Հարցերը պետք է ունենան նաև բանավեճային բնույթ, հարցադրումները առաջադրելիս առաջ քաշել պրոբլեմ «Ինչ կասես այդ պատասխանի մասին»:

Ճիշտ ձևակերպված հարցերը՝ պարզից բարդ, հասկանալիից անհասկանալի, մատչելիից անմատչելի, կարճ ու ընդարձակ պատասխան ենթադրող, նպաստում են աշակերտների մտածելու, ինքնուրույն դատողություն կատարելու, անհրաժեշտ պատասխանները գտնելու կարողությունների ձևավորմանը:Շատ կարևոր է, որ դասին ներգարված աշակերտների թիվը հնարավորինս մեծ լինի, որպեսզի չլինեն դասից դուրս մնացած աշակերտներ:

Ուսումնասիրել եմ, Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր» , Գլուխ 14, «Հարցադրումների մեթոդի առավելությունները» հետազոտական աշխատանքներ:

Ուսումնասիրված աշխատանքներից առանձնացրել եմ մտքեր և հատվածներ, որոք ինձ կօգնեին իմ հետազոտական աշխատանքը ճիշտ և նպատակային դարձնե:
Ջեոֆ Փեթթին իր գրքում ներկայացնում է հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելությունները՝

• Ցույց է տալիս թեմայի տրամաբանությունն ու առաջ անցնում՝ խրախուսելով ոչ թե անգիր անելը, այլ հասկանալը

• Ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա

• ստեղծում է փոխանցելի գիտելիք

• տալիս է ակնթարթային հետադարձ կապ (թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին) սովորելու գործընթացի վերաբերյալ

• դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին

• աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է

• աշակերտներին թույլ է տալիս գործնականում կիրառել ձեր հաղորդած և նրանց կողմից վերջերս յուրացված գաղափարներն ու բառապաշարը

• վերհանում է սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց (այսինքն՝ ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը)

• մոտիվացնում է, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին հաջողություն գրանցել ուսումնառության ընթացքում

• անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը • կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար

• թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը

• խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը: Թերություններն այն են, որ հարցադրումների մոտեցումը

. • Կարող է ժամանակատար լինել

• դժվարեցնում է խմբում բոլոր աշակերտների ներգրավվածությունը

• հեշտ կիրառվող ձև չէ ուսուցչի համար:

Կարևոր է նաև Հարցերի բաշխումը .Այս դեպքում«ուսուցչի տեսադաշտ»-ից դուրս չի մնում ոչ մի աշակերտ:

Երբ հարցեր եք ուղղում դասարանին, փորձում ենք հարցերը բաշխել հնարավորինս հավասարաչափ՝<Հետևի նստարանին նստածներից ո՞վ կպատասխանի այս

հարցին>,<Իսկ ի՞նչ կասեք, եթե այս հարցին պատասխանի նա, ով դեռ ոչ մի հարց չի պատասխանել>:

Զույգերով աշխատանքի կիրառումը

Եթե ձեր աշակերտները շատ անտարբեր են հարց ու պատասխանների ընթացքում,

կամ եթե ձեր հարցերը դժվար են, բայց հետաքրքիր, կիրառե՛ք զույգերով աշխատանքի հետևյալ ռազմավարությունը: Հարց տվե՛ք և այն գրե՛ք գրատախտակին, հետո հանձնարարե՛ք զույգերով քննարկել՝ տալով նրանց բառացիորեն մեկ կամ երկու րոպե ժամանակ: Անհրաժեշտության դեպքում քննարկման ժամանակ հետևե՛ք, թե արդյոք աշակերտները ուշադիր են առաջադրանքի հանդեպ: Հետո լսե՛ք նրանց՝ գովեստի արժանացնելով խելամիտ պատասխանները: Զույգերով աշխատանքը աշակերտներին մտածելու ժամանակ է տալիս, ինչպես նաև նրանց թույլ է տալիս ստուգել իրենց պատասխանները զուգընկերոջ հետ: Սա ավելացնում է նրանց վստահությունը՝ ըստ այդմ էլ ավելացնելով ձեր հարցերին արձագանքելու նրանց պատրաստակամությունը:

Բաց և փակ հարցեր

Փակ հարցերն ունեն միայն մեկ գոհացուցիչ և սովորաբար շատ կարճ պատասխան: Օրինակ՝ - «Ե՞րբ է տեղի ունեցել», կամ «Ո՞վ է..»:

Բաց հարցերը պահանջում են ավելի հանգամանալից և հաճախ մեկից ավել ճիշտ պատասխան: Օրինակ՝ Ի՞նչ գիտեք Շանիդար հնավայրի մասին, կամ ինչու՞ կործանվեց Բագրատունիների արքայատոհմը,ի՞նչ նշանակություն է ունեցել հայոց պետականության վերականգնումը;

Բաց հարցերը ստիպում են աշակերտներին մտածել, իսկ ուսուցչին շատ ավելի տեղեկություններ են հաղորդում աշակերտների սովորածի վերաբերյալ: Ի հեճուկս սրան՝ փակ հարցերը, ինչպես օրինակ՝ «այո/ոչ» հարցերը, սովորաբար քիչ մտորումների տեղիք են տալիս: Պատասխանը կարելի է կռահել 50% հաջողությամբ, այդ պատճառով էլ դրանց «հայտորոշիչ ուժը» ցածր է, այսինքն՝ ուսուցիչը չի կարող

համոզված լինել, որ ճիշտ պատասխանը վկայում է հաջողված ուսումնառություն մասին:

Բաց հարցադրումները շարժում են սովորողի հետաքրքրությունը, խթանում քննադատական մտածողությունը, մղում վերլուծական անդրադարձի և օգնում սովորողներին յուրովի իմաստավորել ուսումնասիրվող գաղափարը: Նրանց պատասխաններն օգնում են ուսուցչին գնահատել սովորողների իմացածը և դասավանդման հետագա քայլերը:

Կարևոր է նաև,որ ուսուցման ընթացքում ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնելը, այլև դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը, որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից և դասի նպատակից: Հարցերը պետք է լինեն `

- հստակ և նպատակաուղղված
- հակիրճ և տեղին
- աշակերտների մակարդակին համապատասխան
- տրամաբանական հաջորդականությամբ
- մտածելու տեղիք տվող:

Հարցերի և հարցադրումների վերջնական նպատակը աշակերտներից պատասխան և արձագանք ակնկալելն է:

Բացառապես հարցերի միջոցով դասավանդումը երբեմն կոչում են «Սոկրատեսի մեթոդ»: Սոկրատեսը պնդում էր, որ ոչինչ չգիտի (սա մասամբ բացատրում է, թե ինչու նա երբեք սեփական մտքերը գրի չի առել). Սոկրատեսը աշակերտների համոզմունքներում ցանկացած անհետևողականություն ցույց տալու համար նրանց հարցեր էր տալիս:Այս համեստության համար նրան չեն պարգևատրում, ընդհակառակը,նրան մահապատժի են դատապարտում «երիտասարդներին այլասերելու» համար: Բարոյախոսական խրատ մի՛ տվեք չափազանց դժվար հարցեր :[1]

Հարցադրումների հմտությունների ստուգացանկ՝ «տասը պատվիրանները»

1. Տալի՞ս եք այնպիսի հարցեր, որոնց պատասխաններն աշակերտները հաջողությամբ են գտնում:

2. Տալի՞ս եք աշակերտներին մտածելու ժամանակ, օրինակ՝ զույգերով աշխատանքի կիրառմամբ:

3. Օգտագործո՞ւմ եք «Մարմնի լեզուն» (աչքերի կոնտակտ, ժպիտ, հոնքերի բարձրացում, գլխով հաստատում և այլն) պատասխանները խրախուսելու համար:

4. Միշտ շնորհակալություն հայտնո՞ւմ եք, գովեստի արժանացնո՞ւմ կամ այլ կերպ երախտապարտ լինո՞ւմ եք պատասխանների համար:

1. Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր», Գլուխ 14,. «Հարցադրումների մեթոդի. էջ 23

5. Խուսափո՞ւմ եք աշակերտների պատասխանները ծաղրի առարկա դարձնելուց:

6. Եթե պատասխան չի լինում, կարողանո՞ւմ եք տալ դեպի սկզբանական հարցը տանող ավելի պարզ հարց:

7. Ձևակերպո՞ւմ եք հակիրճ ու հասկանալի հարցեր՝ հասարակ լեզվի օգտագործմամբ:

8. Խուսափո՞ւմ եք բացառապես փաստերի վրա հիմնված հարցերից:

9. Կարողանո՞ւմ եք հավասարապես բաշխել հարցերը կամ այլ կերպ ներգրավել բոլոր աշակերտներին:

10. Կարողանո՞ւմ եք ուսուցչի խոսքի ընթացքում մեկ րոպեում, օրինակ, երկու հարց տալ: [1]

1. Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր», Գլուխ 14,. «Հարցադրումների մեթոդի», էջ 24-25

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հետազոտությունս անցկացրել եմ 9-րդ դասարանում: 9-րդ «ա» դասարանում սովորում են 21 աշակերտ՝ 8 աղջիկ, 13 տղա, ծայրահեղ տարբեր կարողություններով:

Նման պայմաններում դժվար էր ապահովել ցանկալի ներգրավվածություն:Մտածեցի միգուցե հարցադրումների մեթոդի օգնությամբ կկարողանամ ապահովել ա շակերտների ամբողջական ներգրավվածություն և որոշեցի հետազոտական դասեր կազմակերպել:

Հետազոտության նպատակ – Ձևավորել մոտիվացիա և նպաստել ուսումնական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Հետազոտության խնդիրներ – Իմ առաջ խնդիր եմ դրել ուսումնասիրել հարցադրումների մեթոդի արդյունավետությունը, հիմնավորել մեթոդի արդյունավետությունը ուսուցման գործընթացի ձևավորման գործում: Ուսումնասիրել եմ գիտամանկավարժական գրականություն և հետազոտվող թեմային վերաբերող կատարված հետազոտական աշխատանքները և կատարել եմ վերլուծություն:Անցկացրել եմ հետազոտական երեք դաս հարցադրումների պարզից բարդ շղթայով;

ԸՆԹԱՑՔ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասի պլան 1

Դասարան- 9-րդ

Առարկա-Հայոց պատմություն

Դասի թեմա՝ Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը.

Դասի նպատակը՝ Նպաստել Հայաստանի առաջին Հանրապետության կայացման, Բաթումի պայմանագրի, իշխանության մարմինների և բանակի ձևավորման, կրթության զարգացման մասին գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ

ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, դիրքորոշում հայտնելու, Հանրապետության հռչակման կարևորությունը արժևորելու կարողությունների զարգացմանը:

Վերջնարդյունքներ՝ Կարողանա՝

- Ներկայացնել և բացատրել Հայաստանի Հանրապետության հռչակման օրը, խորհրդանիշները, հայոց բանակի առաջին ղեկավար գործիչներին, Բաթումի հաշտության պայմանագրի կնքման մասին, Հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունները:
- Պարզաբանել Անդրկովկասյան սեյմի լուծարման պատճառները և Հայաստանի անկախության հռչակման պատմական անհրաժեշտությունը,
- արժևորել ազգային բանակի ստեղծումը պետության կայացման գործում:

Դասի ընթացքը

Խթանման փուլ-Ձեր կարծիքով ինչպիսի՞նն էր ՀՀ հասարակական-քաղաքական կյանքը:

Իմաստի ընկալման փուլ- դասախոսություն, համեմատություն, քննարկում, գործնական աշխատանքի:

Քննարկման հարց-Ինչո՞վ էր պայմանավորված հասարակական-քաղաքական կյանքը Հայաստանում:

Կշռադատման փուլ- կազմել հարցեր, ամփոփել:

1.Ինչպիսի՞ն էր Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը:

2.Քաղաքական ի՞նչ կուսակցություններ դերակատարություն ունեին:

3.Ե՞րբ է կայացել Արևմտահայերի երկրորդ համագումարը:

4.Ի՞նչ կարող եք ասել թուրք-թաթարական խռովարարները:

5.Ե՞րբ կասեցվեցին թուրք-թաթարական խռովությունները

Դասի պլան 2

9-րդ դաս հ. Պատմություն

Դասի թեմա-Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը (1920 թ. մայիսյան ապստամբությունը)

Դասի նպատակը և խնդիրները -ներկայացնեն բոլշևիկների կողմից իշխանությունը գրավելու գործընթացը

Իմանան կառավարության կողմից քաղաքական ճգնաժամը հաղթահարելու՝ կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին

Ուսումնական նյութ-գրքեր, տետրեր, քարտեզ

Դասատիպ- համակցված

Մեթոդներ-հարցման, պատմելու, դասախոսության, էվրիստիկական զրույցի, քննարկման, համեմատության, անդրադարձի և գնահատում:

Միջառարկայական կապ-գրականություն, հայոց պատմություն

Դասի ընթացքը

Խթանման փուլ-հասկացությունների քարտեզագրում «Մայիսյան ապստամբություն»

բառակապակցությամբ

Իմաստի ընկալման փուլ- դասախոսություն, համեմատություն, բանավեճ, քննարկում, գործնական աշխատանք:

Քննարկման հարց-Ինչպե՞ս եք գնահատում ԱՄՆ-ի հումանիտար օգնությունը Հայաստանին

Կշռադատման փուլ- կազմել հարցեր, ամփոփել:

Տնային աշխատանք-«Ապագայի անիվ» ներկայացնել պատճառահետևանքային կապեր

Դասի պլան 3

Դասարան՝9-րդ

Առարկա՝Հայոց պատմություն

Դասի թեման -Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում;Սևրի պայմանագիրը;

Դասի նպատակը՝ Նպաստել Հայաստանի Հանրապետության միջազգային դրության և 1918-1920 թթ Հայկական հարցի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, մեկնաբանելու, համեմատելու, դիրքորոշում հայտնելու, գնահատելու և արժևորելու կարողությունների զարգացմանը:

Վերջնարդյունքներ՝

- Կարողանա ներկայացնել և բացատրել Հայաստանի հարաբերությունները Քառյակ դաշինքի երկրների հետ և հայկական պատվիրակությունների կազմը, Փարիզի խորհրդաժողովի հրավիրման ժամանակը, Հայկական հարցը

ներկայացնող պատվիրակությունները և նրանց միջև առկա տարաձայնությունները:

- Մեկնաբանել Հայաստանի հարաբերությունները նրա անմիջական հարևաններ Վրաստանի, Ադրբեջանի,Թուրքիայի և Իրանի հետ:
- Բացահայտել Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչման անհրաժեշտությունը:
- Վերլուծել <<Միացյալ Անկախ Հայաստանի>>հռչակագիրը:

Կապը ՀՊՉ-Ի Հետ

- արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը:

Խաչվող հասկացություններ՝

- Օրինաչափություն
- Պատճառ և հետևանք
- Ժամանակ և տարածություն
- Անհատ և հարաբերություններ

Կարողունակություններ՝

- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Մեթոդներ՝ Հարցադրումների մեթոդ,մտագրոհ, պատմելու, դասախոսության, քննարկման, անդրադարձ, խմբային աշխատանք, պատմելու, դասախոսության, քննարկման,

Անհրաժեշտ պարագաներ՝Դասագիրք,քարտեզ,համակարգիչ,տետր

Դասատիպ-՝ համակցված,խիկ համակարգ

Միջառարկայական կապ՝ գրականություն, համաշխարհային պատմություն,աշխարհագրություն

Խթանում

1.Երբ էր ստորագրվել Բաթումի պայմանագիրը:

2.Ինչու՞էր Հայաստանի համար անհրաժեշտ վերանայել Բաթումի պայմանագիրը:

3. Ինչու՞ ծագեց հայ-վրացական պատերազմը:Ե՞րբ և ինչպե՞ս լուծվեց այն:

4.Հայկական ի՞նչ տարածքներ էր ձգտում նվաճել Ադրբեջանը:Ի՞նչ ընթացք ունեցավ վիճելի տարածքների հարցի լուծումը:

5.Ե՞րբ Նախիջևանը պաշտոնապես միացվեց Հայաստանի Հանրապետությանը:

6.Ինչո՞ւ չհաջողվեց Նախիջևանը պահել Հայաստանի կազմում:

Քննարկում

Փորձե՛ք գնահատել Հայաստանի հանրապետության հարաբերությունները հարևան երկրների հետ:

Իմաստի ընկալում

Հայ-ադրբեջանական և հայ-վրացական հարաբերությունների ուսումնասիրման համար ստեղծվեցին աշխատանքային խմբեր: Տրված էր հարցաշար՝ փակից բաց հարցերով, որոնցով պիտի քննարկում կազմակերպվեր:Հարցերը բաժանվեցին խմբերի միջև;

1.Երբ է ստորագրվել Բաթումի պայմանագիրը:

2. Ո՞ր տարածքներին էին հավակնում հարևանները:

3. Ե՞րբ է տեղի ունեցել հայ-վրացական պատերազմը:

4. Ե՞րբ է ստեղծվել Լոռու «չեզոք գոտին»:

5. Ե՞րբ է Նախիջևանը պաշտոնապես միացվեց Հայաստանի Հանրապետությանը:

6.Ինչու՞էր Հայաստանի համար անհրաժեշտ վերանայել Բաթումի պայմանագիրը:

7. Ինչու՞ ծագեց հայ-վրացական պատերազմը:Ե՞րբ և ինչպե՞ս լուծվեց այն:

8.Հայկական ի՞նչ տարածքներ էր ձգտում նվաճել Ադրբեջանը:Ի՞նչ ընթացք ունեցավ վիճելի տարածքների հարցի լուծումը:

9.Ինչո՞ւ չհաջողվեց Նախիջևանը պահել Հայաստանի կազմում:

Քննարկում

Փորձե՛ք գնահատել Հայաստանի հանրապետության հարաբերությունները հարևան երկրների հետ:

ե) Ինչու՞ էր Մեծ Բրիտանիան Անդրկովկասում ադրբեջանամետ քաղաքականություն վարում:

զ) Ինչպե՞ս ավարտվեց Նախիջևանի համար պայքարը:

է) Ո՞վ էր ղեկավարում Սյունիքի ազատագրական պայքարը:

ը) Ի՞նչ ընթացք ունեցավ Արցախի ազատագրական պայքարը:

թ) Ի՞նչ արդյունք ունեցավ Նաախիջևանի հայաթափումը, այսօրվա իրավիճակին նայելով փորձել կանխատեսումներ անել Սյունիքի առումով:

Կշռադատում

Խմբերը ի մի բերեցին սովորածը և Գ. Նժդեհի խոսքերով ավարտեցին դասը:

Ամփոփում՝ *3-5 րոպե*
Դասն ամփոփում ենք հետևյալ հարցադրումներով

1.Կարո՞ղ ենք անցյալից դասեր քաղել

2.Ինչու՞ են այս իրադարձությունները տեղի ունենում
3.Ինչպե՞ս կարող էինք խուսափել այդպիսի հետևանքներից

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը կատարելիս, եկել եմ այն եզրակացության, որ ճիշտ և ժամանակին կատարված հարցադրումները շարժում են սովորողի հետաքրքրությունը, խթանում քննադատական մտածողությունը,և որ ամենակարևորն է՝ բարձրացնում են աշակերտների ներգրավվածության մակարդակը:

Մեթոդի կիրառությունը թույլ կտա ուսուցչին ոչ միայն ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության և մասնակցության աստիճանը, խրախուսում ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են սովորողների ինքնավստահությունը:

Հարցադրումների մեթոդը ուսուցման հզոր ռազմավարություն է: Կրթակարգային վերջնարդյունքների և կրթական նպատակների մեջ պարփակված գլխավոր գաղափարների հետ կապ ունեցող;

Հետազոտության գրականությունն ուսումնասիրելիս հանգեցի այն եզրակացման , որ հարցադրումների մեթոդը կարող է հանդիսանալ նաև հաղորդակցական կարողությունների զարգացման և ձևավորման նախադրյալ: Եվ որ, այս տարվա իմ աշխատանքներում ամենաարդյունավետը, հետաքրքիրն ու հաջողվածը հարցադրումների մեթոդով դասերն էին, որոնց ընթացքում հնարավոր էր դառնում ապահովել նույնիսկ քիչ հետաքրքրություն և մասնակցություն ցուցաբերող սովորողների ակտիվ ներգրավվածությունը ուսումնական պրոցեսին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

2. Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր», Գլուխ 14,. «Հարցադրումների մեթոդի.
3. ակտիվացնող-հարցադրումներ.pdf
4. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020. © Խաչատրյան Սերոբ, 2020.
5. Ա. Վ. Կլարին (1994, էջ՝ 184, էջ՝ 180)
6. Ս. Վ. Բոբրիշով և Մ.Վ. Սմագինա (2007թ.)